Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր

«ԵՐԵՎԱՆԻ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՍՆՆԴԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՅ-ՀՈՒՆԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ

Ք. ԵՐԵՎԱՆ «____» _____20____թ.

Մի կողմից՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության <<Երեւանի զբոսաշրջության, սպասարկման եւ սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջ>> պետական ոչ առևտրային կազմակերպությունը /այսուհետև՝ քոլեջ/ պետ. գրանցում թիվ 03Ա055676, 04.10.2002թ. ի դեմս տնօրեն Ա.Ս.Ղազարյանի, որը գործում է քոլեջի կանոնադրությանը համաձայն

Մյուս կողմից՝

սովորող

_____

/անուն, ազգանուն հայրանուն/

կրթության հիմքը

/միջնակարգ / հիմնական /

մասնագիտությունը

_____

ուսուցման համակարգը՝

_____

անվճար / վճարովի

/կամ մյուս կողմից՝ անչափահաս լինելու դեպքում օրինական ներկայացուցիչները (ծնողը, որդեգրողը կամ հոգաբարձուն)/

կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

Պայմանագրի առարկան ուսանողի՝

_____

/մասնագիտություն/

մասնագիտության գծով ՊԿՉ-ի, ուսումնական պլանի և առարկայական կամ մոդուլային ծրագրերի համաձայն՝ ուսուցում իրականացնելու պայմաններն են:

2. Ուսանողի իրավունքները և պարտականությունները

Ուսանողի իրավունքներն ու պարտականությունները կարգավորվում են ՀՀ Սահմանադրությամբ, Կրթության մասին օրենքով, Միջին մասնագիտական կրթության մասին օրենքով հոդված 30 1-10 և հոդված 31 1-6), Աշխատանքային օրենքով, Քոլեջի կանոնադրությամբ, Քոլեջի ներքին կարգապահական կանոններով:

2.1 **Քոլեջի ուսանողը իրավունք ունի՝**

1) ընտրել տվյալ մասնագիտության համար ուսումնական պլանով նախատեսված ոչ պարտադիր (նախասիրական) դասընթացներ, որոնք տրամադրում է Քոլեջը,

2) մասնակցել Քոլեջի կառավարմանը՝ ընդգրկվելով Կառավարման խորհրդի կազմում, Քոլեջում գործող մյուս բոլոր խորհուրդների և հանձնաժողովների կազմում, մասնակցել Քոլեջի ուսանողական խորհրդի ձևավորման և ինքնակառավարման աշխատանքներին, ստեղծել խմբակներ, ակումբներ, կազմակերպել և մասնակցել դրանց, ինչպես նաև Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների և ուսումնական գործընթացի որակի ներքին ապահովման աշխատանքներին

3) մասնակցել իր կրթության բովանդակության ձևավորմանը՝ պահպանելով մասնագիտական կրթության մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչների պահանջները,

4) ստանալ կրթություն՝ պետական կրթական չափորոշիչներին համապատասխան, և ձեռք բերելու գիտության, տեխնիկայի և մշակույթի զարգացման ժամանակակից մակարդակին համապատասխան գիտելիքներ,

5) վճարովի հիմունքով ստանալու հաջորդական կրթություն կամ օգտվելու լրացուցիչկրթության (այդ թվում՝ վճարովի) կարճաժամկետ կրթական ծառայություններից,

6) սահմանված կարգով անհրաժեշտության դեպքում ստանալ ակադեմիական /նպատակային/ արձակուրդ կամ տարկետում,

7) անվճար օգտվել քոլեջի գրադարանից, ուսումնական, գիտական, բուժական և այլ ստորաբաժանումների ծառայություններից,

8) մասնակցել Քոլեջի հետազոտական աշխատանքների կատարմանը,

9) ստանալ ուսման վճարի լրիվ կամ մասնակի փոխհատուցման ուսանողական նպաստ՝ ըստ արտոնյալ հիմունքների,

10) անվճար համակարգում ուսումնառելիս ցածր առաջադիմության դեպքում՝ ըստ սահմանված կարգի, փոխատեղվել վճարովի համակարգ և ուսուցումը շարունակել վճարովի հիմունքներով,

11) վճարովի համակարգում ուսումնառելիս բարձր առաջադիմության շնորհիվ փոխատեղվել անվճար համակարգ՝ ըստ սահմանված կարգի:

2.2 Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի փոխհատուցմամբ կամ անվճար համակարգում ուսումնառող ուսանողները ակադեմիական արձակուրդից վերադառնալուց հետո պահպանում են իրենց կարգավիճակը, իսկ վճարովի հիմունքներով ուսումնառողները վերականգնվում են ուսուցման նույն համակարգում և վճարում են ուսման վարձ մինչև ակադեմիական արձակուրդի ձևակերպումը եղած տարիֆի չափով:

2.3 Քոլեջի ուսանողը և դիմորդն իրավունք ունի ծանոթանալ Քոլեջի լիցենզիային և ներքին կանոնակարգերին:

2.4 Քոլեջի ուսանողը կորցնում է անվճար սովորելու իրավունքը հետևյալ պատճառներով՝ եթե կորցնում է ՀՀ քաղաքացիությունը, միջանկյալ ատեստավորման, ստուգարքների հանձնման, մոդուլների ամփոփման կամ պետական ամփոփիչ քննությունների վերահանձնման պատճառով և փոխատեղման արդյունքում:

2.5 Ուսանողին գերազանցության դիպլոմ կարող է շնորհվել լավ կամ գերազանց գնահատականների 75%-ի առկայության և պետական ամփոփիչ քննությունների գերազանցության դեպքում:

2.6 **Քոլեջի ուսանողը պարտավոր է.**

2.7 կատարել Քոլեջի կանոնադրության պահանջները և պահպանել ներքին կարգապահական կանոնները,

2.8 պարտադիր հաճախել ուսումնական պլանով նախատեսված պարապմունքներին և սահմանված ժամկետներում կատարել ուսումնական գործընթացի ժամանակացույցով նախատեսված գործառույթները, քանի որ տարեկան 120 դ/ժանհարգելի բացակայության դեպքում տրվում է նկատողություն, իսկ տարեկան 200 դ/ժ բացակայության դեպքում հեռացում, կամ կուրսի կրկնում:

2.9 խնամքով վերաբերվել Քոլեջի գույքին՝ վնաս պատճառելու դեպքում հատուցել նյութական վնասը,

2.10 հարգել աշխատողների և ուսանողների իրավունքներն ու արժանապատվությունը,

2.11 սովորելիս սահմանված կարգով և ժամկետներում վճարել ուսման վարձը:Առաջին կուրսի առաջին կիսամյակի ուսման վարձավճարի վճարման ժամկետը մինչև սեպտեմբերի 15-ն է, իսկ երկրորդ կիսամյակի վճարման ժամկետը մինչև մարտի 15-ն է:Երկրորդ և բարձր կուրսերում ուսման վարձավճարը առաջին կիսամյակում պետք է վճարվի մինչև սեպտեմբերի 30-ը, իսկ երկրորդ կիսամյակում մինչև մարտի 30-ը:

2.12 կատարել կրթական ծրագրերի պահանջները,

2.13 հաճախել դասախոսություններին, սեմինար, գործնական-լաբորատոր պարապմունքներին, պրակտիկաներին

2.14 մասնակցել քոլեջի կողմից կազմակերպվող միջոցառումներին,

2.15 բարձր պահել Քոլեջի ուսանողի պատիվն ու հեղինակությունը,

2.16 պահպանել հասարակության բարոյական նորմերը,

2.17 անկախ ուսումնառության ընդհատման պատճառից մարել ուսման վարձի և/կամ գրադարանի պարտքը մինչև ուսանողական իրավունքից ազատումը,ընդ որում ուսման վարձը վճարվում է մինչև ազատումը ընկած ժամանակահատվածի համար:

3. Քոլեջի իրավունքները և պարտականությունները

3.1 Քոլեջը պարտավորվում է կազմակերպել ուսանողի ուսուցումը՝ հաստատված ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի միջոցով:

3.2 Ուսումնառության տարիներին ապահովել ուսումնական պլաններով նախատեսված ուսումնական գործընթացն ապահովող բոլոր պայմանները:

3.3 Ուսանողի համար ստեղծել հնարավորություններ՝ օգտվելու քոլեջի գրադարանից, մարզական և առողջարանական կառույցներից, ընթերցասրահից, նիստերի դահլիճից, սննդի և սոցիալական այլ ծառայություններից:

3.4 Ուսանողի կրթության և դաստիարակության գործընթացն ապահովել բարձրակարգ մասնագետներով, դասավանդման ժամանակակից մեթոդներով, դասագրքերով, ուսուցման տեխնիկական միջոցներով, ուսանողին տալ մասնագիտական կրթություն և տալ ավարտական փաստաթուղթ (դիպլոմ) համապատասխան ներդիրով:

3.5 Ընտրել պրակտիկ ուսուցման համապատասխան բազաներ և ապահովել պրակտիկ ուսուցումը /ուսումնական, արտադրական, նախաավարտական/՝ անվճար հիմունքներով

3.6 Միջին մասնագիտական կրթության հիմնական կամ լրացուցիչ կրթական ծրագիրը չավարտած անձին տալ ակադեմիական տեղեկանք՝ ուսումնասիրած առարկաների, դասընթացների, դրանց ժամաքանակի և արդյունքների նշումով:Ելնելով մասնագիտական առանձնահատկություններից, ուսումնական և արտադրական պրակտիկաները կարող են իրականացվել նաև հանգստյան օրերին,ինչպես նաև ամառային և ձմեռային արձակուրդների ժամանակ:

4. Ուսման վարձի վճարման կարգ և հատուկ պայմաններ

4.1. Ուսման վարձի չափը սահմանվում է քոլեջի կողմից, որը կազմում է.ներքոգրյալ մասնագիտությունների համար՝ համապատասխան վճարները՝

«Զբոսաշրջություն» ԴՈՒԱԼ կրթական ծրագրով 220.000 ՀՀ դրամ տարեկան

«Սպասարկման կազմակերպում» 220.000 ՀՀ դրամ տարեկան

«Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» 220.000 ՀՀ դրամ տարեկան

«Գործավարություն՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» 220.000 ՀՀ դրամ տարեկան

«Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում (ըստ տրանսպորտի տեսակների)» Դուալ կրթական ծրագրով 220.000 ՀՀ դրամ տարեկան

«Հանրային սննդամթերքի տեխնոլոգիա» առկա ուսուցմամբ՝ 220.000 ՀՀ դրամ տարեկան

«Հացաթխման, մակարոնեղենի և հրուշակեղենի տեխնոլոգիա» 200.000 ՀՀդրամ տարեկան

«Խմորման արտադրությունների տեխնոլոգիա և գինեգործություն» 200.000 ՀՀ դրամ տարեկան

«Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա»165.000 ՀՀ դրամ տարեկան

«Հանրային սննդամթերքի տեխնոլոգիա» հեռակա ուսուցմամբ 165.000 ՀՀ դրամ տարեկան

Օտարերկրյա դիմորդների համար նախապատրաստական կուրսի վարձը սահմանված է 250.000 /երկու հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ տարեկան

4.2 Ուսանողի կողմից վճարումը կարող է կատարվել միանվագ, ըստ կիսամյակների՝ յուրաքանչյուր կիսամյակը սկսելուց 15 աշխատանքային օրվա ընթացքում, եթե փոխադարձ համաձայնությամբ վճարման այլ ժամկետներ չեն սահմանվում, ինչպես նաև մաս-մաս ուսումնական տարվա ընթացքում, **բացառությամբ 1-ին կուրսի 1-ին կիսամյակից, որտեղ ուսանողի կողմից ուսման վարձի կեսի վճարումը պետք է կատարվի ամբողջությամբ**:

4.3 Ուսման վարձի վճարումը կատարվում է փոխանցումով քոլեջի հաշվեհամարին՝ ՀՎՀՀ 02232723 Կենտրոնական գանձապետարանի/h 900018001504:

5. Պայմանագրի գործողության ժամկետները վաղաժամկետ լուծարման հիմքը

5.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է ստորագրման պահից և գործում է մինչև ուսանողի ուսումնառության ավարտը, բացառությամբ սույն պայմանագրի 5.2 և 6.6 կետերում նշված դեպքերի:

5.2 Ուսանողի հեռացման վերաբերյալ քոլեջի հրամանը հիմք է սույն պայմանագրի վաղաժամկետ լուծման համար: Քոլեջը պայմանագիրը վաղաժամկետ կարող է լուծել, եթե նա

1)կամավոր ընդհատում է ուսումնառությունը,

2) եթե անհարգելի բացակայում է տարեկան 200 դ/ժ

3) եթե միջանկյալ ատեստավորումը անցնում է 4-ից ավելի առարկայական պարտքերով,

4) չի հանձնում 1-ից 4 առարկայական պարտքերը,

5) եթե մեկ ուսումնական տարվա ընթացքում երկու և ավելի կարգապահական տույժ է կիրառվել:

6. Եզրափակիչ դրույթներ

6.1 Կողմերն իրենց պարտականությունները ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու դեպքում ազատվում են սույն պայմանագրով սահմանված պատասխանատվությունից, եթե դա տեղի է ունեցել սույն պայմանագիրը կնքելուց հետո ծագած այնպիսի անհաղթահարելի ուժի ազդեցության (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ) հետևանքով, որը կողմերը չէին կարող կանխատեսել և կանխարգելել:

6.2 Սույն պայմանագրով չկարգավորված հարցերը լուծվում են գործող օրենսդրության համապատասխան:

6.3 Կողմերը պարտավորվում են վիճահարույց հարցերը լուծել փոխադարձ համաձայնությամբ հակառակ դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.4 Սույն պայմանագիրը կազմված է երկու հավասարազոր օրինակից: Պայմանագիրն ի պահ է տրվում քոլեջին և ուսանողին կամ օրինական ներկայացուցիչին:

6.5 Զինվորական ծառայության կամ առողջական վիճակի պատճառով ձևակերպված ակադեմիական արձակուրդից հետո վերականգնվող ուսանողի հետ նոր պայմանագիր է կնքվում, անվճար համակարգի ուսանողը պահպանում է նախկինում ունեցած կարգավիճակը, իսկ վճարովի համակարգինը՝ վճարում է նախկինում սահմանված ուսման վարձը:

6.6 Ուսման վարձը ուսումնառության տարիների ընթացքում մնում է անփոփոխ, եթե որևէ պատճառով չի ազատվում ուսանողական իրավունքից կամ հեռացվում:

6.7 Ուսանողական իրավունքը վերականգնելիս, վճարովի համակարգում մասնագիտությունը փոխելիս, այլ ուսումնական հաստատությունից տեղափոխվելիս և հաջորդական կրթություն ստանալու դեպքում ուսման վարձը սահմանվում է տվյալ ուսումնական տարվա տարիֆի չափով:

6.8 Ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի պահանջները և ուսումնական գործընթացի ժամանակացույցը չկատարելու, անբավարար ակադեմիական առաջադիմություն ցուցաբերելու, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ կարգավորվող կանոնադրության կամ ներքին կարգապահական կանոններով նախատեսված պահանջները խախտելու համար ուսանողը կարող է Տնօրենի կամ նրա լիազորած անձի կողմից ենթարկվել կարգապահական պատասխանատվության՝ ընդհուպ մինչև Քոլեջից հեռացվելը:

6.9 Ուսման վարձը չմուծած ուսանողը քննաշրջան չի թույլատրվում:

6.10 Անկախ ուսումնառության ընդհատման պատճառից սույն պայմանագիրը համարվում է անվավեր: Եթե ուսանողը վճարել է ուսման վարձը, սակայն ընդհատում է ուսումը, ապա քոլեջի կողմից իրականացվում է վճարած ուսման վարձի վերահաշվարկ և ուսանողին վերադարձվում չուսումնառած ժամանակահատվածի համար վճարած գումարը, իսկ այն դեպքում,երբ չի վճարել,ապա վճարում է իր ուսումնառած ամիսների համար:

7. Պայմանագրի իրավական հիմքերը կանոնակարգվում են ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, «Կրթության մասին>>, «Նախնական (արհեստագործական) մասնագիտական և միջին մասնագիտական կրթության մասին>> ՀՀ օրենքներով, ուսումնական հաստատության կանոնադրությամբ, ներքին կարգապահական կանոններով և այլ իրավական ակտերով:

7.2 Սույն պայմանագիրը ստորագրելով ուսանողը կամ նրա օրինական ներկայացուցիչը հավաստիացնում է, որ ծանոթացել է քոլեջի լիցենզիային, կանոնադրությանը, ներքին կանոնակարգերին, կնքվելիք պայմանագրին և քոլեջի առաքելությանն ու նպատակներին:

8. Կողմերի իրավաբանական հասցեները և ստորագրությունները

Ուսանող կամ Օրինական ներկայացուցիչ

_____

Անձնագիր N ____/_____

Երբ է տրված_____

Ում կողմից է տրված_____

Հասցե_____

Հեռ._____

Ստորագրություն_____

«Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջ»

ՊՈԱԿ

Հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց 40

ՀՎՀՀ 02232723

Կենտրոնական գանձապետարան

հ/հ 900018001504

Տնօրեն՝ _____Ա.Ս.Ղազարյան_____

(անուն, ազգանուն, հայրանուն)

Ստորագրություն_____

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր

«ԵՐԵՎԱՆԻ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՍՆՆԴԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՅ-ՀՈՒՆԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ԵՎ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՈՐԱՑՎԱԾ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ

Ք. ԵՐԵՎԱՆ <<____>> _____2023թ.

Մի կողմից՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության <<Երեւանի զբոսաշրջության, սպասարկման եւ սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջ>> պետական ոչ առևտրային կազմակերպությունը /այսուհետև՝ քոլեջ/ պետ. գրանցում թիվ 03Ա055676, 04.10.2002թ. ի դեմս տնօրեն Ա.Ս.Ղազարյանի, որը գործում է քոլեջի կանոնադրությանը համաձայն

Մյուս կողմից՝ ուսանող _____

/անուն, ազգանուն հայրանուն/

/կրթության հիմքը/

_____

/մասնագիտությունը, կուրսը/

_____

/ուսուցման համակարգը/

կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

Պայմանագրի առարկան ուսանողի՝ _____

/մասնագիտություն/

մասնագիտության գծով ուսումնական պլանի և առարկայական ծրագրերի համաձայն՝ _____ ուսուցում իրականացնելու պայմաններն են:
/ուսուցման համակարգ/

2. Զորացրված ուսանողի իրավունքները և պարտականությունները

2.0 Քոլեջի ուսանողը իրավունք ունի՝

1) շարունակել ուսումը նույն մասնագիտությամբ համապատասխան կուրսում
2) պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի փոխհատուցմամբ ուսումնառող և կրթաթոշակ ստացող ուսանողները տարկետումից վերադառնալուց հետո վերականգնվում են ուսուցման նույն համակարգում՝ ստանալով կրթաթոշակ, իսկ վճարովի հիմունքներով ուսումնառած ուսանողները վճարում են ուսման վարձ մինչև ակադեմիական արձակուրդի ձևակերպումը եղած տարիֆի չափով:
3) ընտրել տվյալ մասնագիտության համար ուսումնական պլանով նախատեսված ոչ պարտադիր (նախասիրական) դասընթացներ, որոնք տրամադրում է Քոլեջը,
4) մասնակցել Քոլեջի կառավարմանը՝ ընդգրկվելով Կառավարման խորհրդի կազմում, Քոլեջում գործող մյուս բոլոր խորհուրդների և հանձնաժողովների կազմում, մասնակցել Քոլեջի ուսանողական խորհրդի ձևավորման և ինքնակառավարման աշխատանքներին, ստեղծել խմբակներ, ակումբներ, կազմակերպել և մասնակցել դրանց, ինչպես նաև Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների և ուսումնական գործընթացի որակի ներքին ապահովման աշխատանքներին
5) ստանալ կրթություն՝ պետական կրթական չափորոշիչներին համապատասխան, և ձեռք բերելու գիտության, տեխնիկայի և մշակույթի զարգացման ժամանակակից մակարդակին համապատասխան գիտելիքներ,
6) վճարովի հիմունքով ստանալու հաջորդական կրթություն կամ օգտվելու լրացուցիչ կրթության(այդ թվում՝ վճարովի) կարճատև կրթական ծառայություններից,
7) սահմանված կարգով վճարովի ուսուցման համակարգից փոխադրվել անվճար ուսուցման համակարգ և հակառակը,
8) սահմանված կարգով անհրաժեշտության դեպքում ստանալ ակադեմիական /նպատակային/ արձակուրդ,
9) անվճար օգտվել քոլեջի գրադարանից, ուսումնական, գիտական, բուժական և այլ ստորաբաժանումների ծառայություններից,
10) մասնակցել Քոլեջի հետազոտական աշխատանքների կատարմանը:

2.1Քոլեջի ուսանողը պարտավոր է.

1. կատարել Քոլեջի կանոնադրության պահանջները և պահպանել ներքին կարգապահական կանոնները,
2. պարտադիր հաճախել ուսումնական պլանով նախատեսված պարապմունքներին և սահմանված ժամկետներում կատարել ուսումնական գործընթացի ժամանակացույցով նախատեսված գործառույթները,
3. խնամքով վերաբերվել Քոլեջի գույքին՝ վնաս պատճառելու դեպքում հատուցել նյութական վնասը,
4. հարգել աշխատողների և ուսանողների իրավունքներն ու արժանապատվությունը,
5. վճարովի հիմունքներով սովորելիս՝ սահմանված կարգով և ժամկետներում վճարել ուսման վարձը,
6. կատարել կրթական ծրագրերի պահանջները,
7. հաճախել դասախոսություններին, սեմինար, գործնական-լաբորատոր պարապմունքներին, պրակտիկաներին
8. մասնակցել քոլեջի կողմից կազմակերպվող միջոցառումներին,
9. բարձր պահել Քոլեջի ուսանողի պատիվն ու հեղինակությունը,
10. պահպանել հասարակության բարոյական նորմերը,
11. անվճար ուսուցման կարգավիճակը կորցնելու դեպքում համապատասխան կուրսի համար նախատեսված վարձավճարի չափով և սահմանված ժամկետներում վճարել ուսման վարձը,
12. անկախ ուսումնառության ընդհատման պատճառից մարել ուսման վարձի և/կամ գրադարանի պարտքը:

3. Քոլեջի իրավունքները և պարտականությունները

3.1 Քոլեջը պարտավորվում է կազմակերպել ուսանողի ուսուցումը՝ հաստատված ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի միջոցով:
3.2 Ուսումնառության տարիներին ապահովել ուսումնական պլաններով նախատեսված ուսումնական գործընթացն ապահովող բոլոր պայմանները:
3.3 Ուսանողի համար ստեղծել հնարավորություններ՝ օգտվելու քոլեջի գրադարանից, մարզական և առողջարանական կառույցներից, ընթերցասրահից, նիստերի դահլիճից, սննդի և սոցիալական այլ ծառայություններից:
3.4 Ուսանողի կրթության և դաստիարակության գործընթացն ապահովել բարձրակարգ մասնագետներով, դասավանդման ժամանակակից մեթոդներով, դասագրքերով, ուսուցման տեխնիկական միջոցներով, ուսանողին տալ մասնագիտական կրթություն և տալ ավարտական փաստաթուղթ (դիպլոմ) համապատասխան ներդիրով:
3.5 Ընտրել պրակտիկ ուսուցման համապատասխան բազաներ և ապահովել պրակտիկ ուսուցումը /ուսումնական, արտադրական, նախաավարտական/՝ անվճար հիմունքներով
3.6 Միջին մասնագիտական կրթության հիմնական կամ լրացուցիչ կրթական ծրագիրը չավարտած անձին տալ ակադեմիական տեղեկանք՝ ուսումնասիրած առարկաների, դասընթացների, դրանց ժամաքանակի և արդյունքների նշումով:
3.7 Ստեղծել հավասար պայմաններ առաջադիմության բարձրացման համար թե' անվճար և թե' վճարովի համակարգում կրթություն ստացող ուսանողների համար և վճարովի ուսուցման համակարգի ուսանողին սահմանված կարգով փոխադրել անվճար ուսուցման համակարգ և հակառակը:

4. ՈՒսման վարձի վճարման կարգ և հատուկ պայմաններ վճարովի ուսուման դեպքում

4.1. Ուսանողի կողմից վճարումը կարող է կատարվել միանվագ՝ ըստ կիսամյակների, ինչպես նաև մաս-մաս: Վարձի վճարումը կատարվում է փոխանցումով քոլեջի հաշվեհամարին՝ ՀՎՀՀ 02232723 Կենտրոնական գանձապետարան h/h 900018001504:

5.Անվճար համակարգում ուսումնառողների կարգավիճակը զորացրումից հետո

5.1 Անվճար համակարգում ուսումնառողները զորացրումից հետո շարունակում են իրենց ուսումը անվճար համակարգում

5.2 Անվճար համակարգում ուսումնառող և կրթաթոշակ ստացող ուսանողները շարունակում են անվճար համակարգում ուսումնառել և ստանալ կրթաթոշակ

5.3 Կրթաթոշակի հետագա տարիների ընթացքում ստացումը պայմանավորված է իրենց առաջադիմությամբ

6. Պայմանագրի գործողության ժամկետները վաղաժամկետ լուծարման դեպքում

6.1. Ուսանողի ուսանողական իրավունքից ազատման վերաբերյալ քոլեջի հրամանը հիմք է սույն պայմանագրի վաղաժամկետ լուծման համար: ՈՒսանողը պայմանագիրը վաղաժամկետ կարող է լուծել, եթե նա կամավոր ընդհատում է ուսումնառությունը և այդ մասին դիմում է ներկայացնում տնօրինությանը՝ վճարելով սովորած ժամանակաշրջանի համար նախատեսված ուսման վարձը:

6.2 Ուսանողի հեռացման վերաբերյալ քոլեջի հրամանը հիմք է սույն պայմանագրի վաղաժամկետ լուծարման համար, եթե ընդհատվում է ուսումնառությունը անհարգելի բացակայությունների կամ անբավարար առաջադիմության պատճառով:

7. Եզրափակիչ դրույթներ

1. Կողմերն իրենց պարտականությունները ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու դեպքում ազատվում են սույն պայմանագրով սահմանված պատասխանատվությունից, եթե դա տեղի է ունեցել սույն պայմանագիրը կնքելուց հետո ծագած այնպիսի

անհաղթահարելի ուժի ազդեցության (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ) հետևանքով, որը կողմերը չէին կարող կանխատեսել և կանխարգելել:

2. Սույն պայմանագրով չկարգավորված հարցերը լուծվում են գործող օրենսդրության համապատասխան:
3. Կողմերը պարտավորվում են վիճահարույց հարցերը լուծել փոխադարձ համաձայնությամբ հակառակ դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Սույն պայմանագիրը կազմված է երկու հավասարազոր օրինակից: Պայմանագիրն ի պահ է տրվում քոլեջին և ուսանողին կամ օրինական ներկայացուցիչին:
5. Ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի պահանջները և ուսումնական գործընթացի ժամանակացույցը չկատարելու, անբավարար ակադեմիական առաջադիմություն ցուցաբերելու, ինչպես նաև կանոնադրության կամ ներքին կարգապահական կանոններով նախատեսված պահանջները խախտելու համար ուսանողը կարող է Տնօրենի կամ նրա լիազորած անձի կողմից ենթարկվել կարգապահական պատասխանատվության՝ ընդհուպ մինչև Քոլեջից հեռացվելը:
6. Ուսման վարձը չմուծած ուսանողը քննաշրջան չի թույլատրվում:
7. Անկախ ուսումնառության ընդհատման պատճառից սույն պայմանագիրը համարվում է անվավեր և քոլեջի կողմից իրականացվում է վճարած ուսման վարձի վերահաշվարկ և ուսանողին վերադարձվում չուսումնառած ժամանակահատվածի համար վճարած գումարը:

8. Պայմանագրի իրավական հիմքերը

Ուսանողի և քոլեջի միջև հարաբերությունները կանոնակարգվում են ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, «Կրթության մասին>>, «Նախնական (արհեստագործական) մասնագիտական և միջին մասնագիտական կրթության մասին>> ՀՀ օրենքներով, ուսումնական հաստատության կանոնադրությամբ, ներքին կարգապահական կանոններով և այլ իրավական ակտերով:

9. Կողմերի իրավաբանական հասցեները և ստորագրությունները

Ուսանող կամ Օրինական ներկայացուցիչ

_____

Անձնագիր N _____/_____

Երբ է տրված_____

Ում կողմից է տրված_____

Հասցե_____

Հեռ._____

Ստորագրություն_____

«Երևանի գրոսաբրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջ» ՊՈԱԿ

Հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց 40

ՀՎՀՀ 02232723

Կենտրոնական գանձապետարան

հ/հ 900018001504

Տնօրեն՝ _____Ա.Ա.Ղազարյան_____

(անուն, ազգանուն, հայրանուն)

Ստորագրություն_____